

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Փականագործ-սանտեխնիկ
Դերը	<p>Փականագործ-սանտեխնիկը կատարում է տարածքի ուսումնասիրում և չափագրում՝ ըստ աշխատանքային գծագրի: Կազմում է օգտագործվող սարքերի և սարքավորումների անհրաժեշտ մասնագիր՝ ըստ առաջադրանքի և ընտրում է համապատասխան գործիքներ: Ապահովում է ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի բնականոն աշխատանքը:</p> <p>Աշխատանքները ավարտելուց հետո կատարում է փորձարկումներ ըստ նախատեսված կարգի:</p>
<u>Խնդիրների բնագավառ 1</u>	<i>Սանիտարատեխնիկական սրքավորումների օգտագործում</i>
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> – օգտագործում է սանիտարատեխնիկական սարքավորումներն՝ ըստ նշանակության, – տեղադրում է սանիտարատեխնիկական սարքավորումները՝ ըստ տեղամասի հատակագծի:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • սարքավորումները գործում են՝ անխափան և ըստ նշանակության, • ապահովում է տեղադրված սանիտարատեխնիկական սարքավորումների աշխատանքի հուսալիությունը:
<u>Խնդիրների բնագավառ 2</u>	<i>Պահանջագրի և հաշվետվության ներկայացում</i>
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> – կազմում և ներկայացնում է անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և մանրակների վերաբերյալ պահանջագիր:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և մանրակների վերաբերյալ պահանջագիրը ներկայացնում է ընդունված ձևաչափով:
<u>Խնդիրների բնագավառ 3</u>	<i>Նախապատրաստում սանիտարատեխնիկական աշխատանքներին</i>
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> – ստուգում է կատարվող աշխատանքի համապատասխանությունը ըստ գծագրի և նախապատրաստում է աշխատանքային տեղամասը, – նախապատրաստում է օգտագործվող գործիքները, սանիտարատեխնիկական սարքերն ու սարքավորումները տեղադրմանը, – ստուգում է օգտագործվող սարքերի և սարքավորումների անխափան աշխատանքը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • կատարվող աշխատանքը լիովին համապատասխանում է աշխատանքային գծագրին, • ճիշտ է նախապատրաստում է օգտագործվող գործիքները, սանիտարատեխնիկական սարքերն ու սարքավորումները տեղադրմանը, • լիարժեք ստուգում է օգտագործվող սարքերի և սարքավորումների անխափան աշխատանքը:
<u>Խնդիրների բնագավառ 4</u>	<i>Սանիտարատեխնիկական աշխատանքների իրականացում</i>
Աշխատանքային գործընթացը	<p>իրականացնում է.</p> <ul style="list-style-type: none"> – մանրակների և խողովակների չափանշում,

	<ul style="list-style-type: none"> - խողովակների հատում, - ամրակային պարուրակի ակոսում, - խողովակների կորացում, - խողովակների միացում, - խողովակաշարերի, սարքերի ու սարքավորումների հավաքում:
Գատարման չափանիշները	<p>ճիշտ է իրականացնում.</p> <ul style="list-style-type: none"> • մանրակներն ու խողովակները չափանշված են՝ ըստ գծագրի, • ամրակային պարուրակի ակոսումը, խողովակների հատումը և կորացումը կատարված են՝ ըստ գործող նորմերի, • խողովակների միացումը, խողովակաշարերի, սարքերի ու սարքավորումների հավաքումը իրականացված են՝ ըստ կատարման տեխնոլոգիաների:
Խնդիրների բնագավառ 5	<i>Սանիտարատեխնիկական աշխատանքների նորոգում</i>
Աշխատանքային գործընթացը	- կատարում է սարքերի, սարքավորումների և խողովակաշարերի միացումների նորոգումներ:
Գատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • իրականացված սարքերի, սարքավորումների և խողովակաշարերի միացումների նորոգումները ապահովում են աշխատանքի հուսալիությունը:
Խնդիրների բնագավառ 6	<i>Սանիտարատեխնիկական աշխատանքների փորձարկում</i>
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - ստուգում է խողովակաշարերի, օժանդակ սարքավորումների հերմետիկությունը, - ստուգում է ջեռուցիչ սարքերի անխափան աշխատանքը, - կատարում է տաք և սառը ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի տեխնիկական զննում:
Գատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • ապահովված է խողովակաշարերի, օժանդակ սարքավորումների երկարաժամկետ հերմետիկությունը, • ջեռուցիչ սարքերի անխափան աշխատանքը ստուգված է՝ ըստ տեխնիկական անձնագրի, • զննման արդյունքում բացահայտվում է տաք և սառը ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակը:
Պատասխանատվությունը	Փականագործ-սանտեխնիկը պատասխանատու է կատարած աշխատանքների համար:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	հայերեն՝ գերազանց երկու օտար լեզու՝ բավարար
Համակարգիչը	MS Word՝ լավ MS Excel՝ լավ Internet Explorer՝ լավ
Գիտելիքը	<ul style="list-style-type: none"> • սանիտարատեխնիկական աշխատանքների հիմունքների իմացություն, • մասնագիտական տերմինաբանության տիրապետում, • խողովակների, օժանդակ սարքավորումների, նյութերի տեսակների և նրանց հիմնական մեխանիկական հատկություններին վերաբերող

	<p>գիտելիքներ,</p> <ul style="list-style-type: none"> • գործիքների, սարքերի, սարքավորումների տեխնիկական անձնագրերից օգտվելու գիտելիքներ, • մաթեմատիկական ոչ բարդ հաշվարկներ կատարելու իմացություն, • աշխատանքային գծագրեր կարդալու իմացություն, • սանիտարատեխնիկական համակարգերում կիրառվող սարքերի տեղադրման և օգտագործման վերաբերյալ գիտելիքներ, • սանիտարատեխնիկական համակարգերում հանդիպող թերությունների բացահայտման և վերացման ձևերի վերաբերյալ գիտելիքներ, • աշխատանքի անվտանգության կանոնների իմացություն:
<p>Կարողությունները, հմտություններ և վերաբերմունքը</p>	<p>Ժամանակակից աշխատանքային գործընթացը պահանջում է արագություն, դիտողականություն, ըմբռնողություն և ճշգրտություն:</p> <p>Որակի վերահսկման վերլուծություն. ստուգել սանիտարատեխնիկական համակարգերը, ծառայությունները կամ գործընթացները՝ գնահատելու համար որակը կամ արդյունավետությունը:</p> <p>Տրամաբանում և որոշման կայացում. օգտագործելով տրամաբանությունը և բանականությունը՝ տարբերակել խնդիրների այլընտրանքային լուծումների, բխող հետևությունների կամ մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը:</p> <p>Ուսուցում. մյուսներին սովորեցնելը, թե ինչպես անել ինչ-որ բան:</p> <p>Ժամանակի կառավարում. ճշգրտորեն կառավարել սեփական ժամանակը:</p> <p>Մոնիտորինգ. գնահատել սեփական կամ կազմակերպությունների գործողությունները՝ բարելավումներ կամ ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար:</p> <p>Համակարգչային և ինտերնետային հիմնական գիտելիքներ. հաճախ կիրառվող համակարգչային ծրագրերի՝ Microsoft Word, Excel իմացություն, ինչպես նաև բավականաչափ գիտելիք օգտագործելու համար ինտերնետը՝ որպես փնտրման համակարգի միջոց:</p> <p>Մարդկանց ընկալելու ունակություն. ուշադրություն դարձնել մարդկանց արձագանքներին և փորձել ըմբռնել դրանց պատճառները:</p> <ul style="list-style-type: none"> • Անվտանգության պահպանման, սանիտարատեխնիկական աշխատանքների կատարման ժամանակ առաջացած վնասվածքների վերաբերյալ և առաջին բուժօգնության իրականացման կարողություններ, • սանիտարատեխնիկական աշխատանքների գործիքները տարբերակելու և կիրառելու կարողություններ, • սանիտարատեխնիկական աշխատանքներում իրականացվող խողվակների կտրման, կորացման, սարքերը և օժանդակ սարքավորումները միմյանց միացման կարողություններ,

	<ul style="list-style-type: none"> • սանիտարատեխնիկական և ջեռուցիչ սարքերի տեղադրման, փորձարկման և շահագործման կարողություններ, • շենքերի ու կառույցների ներքին՝ սառը, տաք, հակահրդեհային ջրամտակարարման համակարգերի շահագործման, նորոգման ու փորձարկման աշխատանքների իրականացման կարողություններ, • շենքերի ու կառույցների ջրահեռացման համակարգի իրականացման, շահագործման, վերանորոգման, խցանումների վերացման և փորձարկման աշխատանքների իրականացման կարողություններ:
--	--

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ՓԱԿԱՆԱԳՈՐԾ-ՄԱՆՏԵԽՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆՇՆԵՐ

«Փականագործ-սանտեխնիկ» որակավորմամբ արհեստավորի մասնագիտական որակավորման գնահատման ժամանակ հաշվի է առնվում նրա գործունեության պարտականություններով սահմանվող հիմնական կարողությունների և հմտությունների շրջանակը՝ համաձայն ներքոշարադրյալի.

Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ իրականացնող փականագործ-սանտեխնիկը պետք է.

- կարողանա օգտագործել սանիտարատեխնիկական սարքավորումներն՝ ըստ նշանակության,
- կարողանա տեղադրել սանիտարատեխնիկական սարքավորումները՝ ըստ տեղամասի հատակագծի,
- կարողանա կազմել և ներկայացնել անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և մանրակների վերաբերյալ պահանջագիր,
- կարողանա նախապատրաստել օգտագործվող գործիքները, սանիտարատեխնիկական սարքերն ու սարքավորումները և աշխատանքային տեղամասը,
- կարողանա ստուգել օգտագործվող սարքերի և սարքավորումների անխափան աշխատանքը,
- կարողանա իրականացնել մանրակների ու խողովակների չափանշում՝ ըստ գծագրի,
- կարողանա իրականացնել ամրակային պարուրակի ակոսում, խողովակների հատում և կորացում՝ ըստ գործող նորմերի,
- կարողանա իրականացնել խողովակների միացում, խողովակաշարերի, սարքերի ու սարքավորումների հավաքում ըստ կատարման տեխնոլոգիաների,
- կարողանա իրականացնել սարքերի, սարքավորումների և խողովակաշարերի միացումների նորոգումներ,
- կարողանա ստուգել խողովակաշարերի, օժանդակ սարքավորումների հերմետիկությունը,
- կարողանա ստուգել ջեռուցիչ սարքերի անխափան աշխատանքը,

- կարողանա կատարել տաք և սառը ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի տեխնիկական գնում,
- կարողանա տալ խորհրդատվություն շահագործողներին,
- կարողանա օգտվել տեղեկատվական և տեխնիկական գրականությունից ու փաստաթղթերից,
- պահպանի աշխատանքի անվտանգության կանոնները,
- կարողանա ցուցաբերել առաջին օգնություն:

Որակավորման շնորհման ժամանակ ուսանողը պետք է անսխալ կատարի բոլոր գործնական վարժությունները, որոնք կբավարարեն շինարարական նորմերի պահանջները և ցուցաբերի աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ տեսական գիտելիքների իմացություն: Տեսական գիտելիքների շրջանակը որոշվում է, հաշվի առնելով տարբեր փոփոխվող իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունելու հիմքի առկայությունը: